

Յովհաննու 3:16 (John 3:16)

«Աստուած Քեզ Կը Սիրէ»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 01.05.95

Այս իրիկուն կ'ուզեմ համարի մը մասին խօսիլ որ շատերուդ ծանօթ է, և գոց ալ գիտէք - Յովհաննու 3:16 «*Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին Որդին տուաւ, որպէս զի ամէն ո'վ որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ:*»

Յստակ է այս համարը, սակայն խորհիմ է զայն բացատրելը: Աստուած մեզ կը սիրէ: Ամէն մէկս կը սիրէ՝ մեղաւոր կամ անտարբեր: Ան մեզ կը սիրէ: Առաւել՝ իր զաւկին Յիսուս Քրիստոսի միջոցով, որ մեր նամբան բացաւ որպէսզի զինք նանչնանք: Մի քանի վայրկեանէն հաղորդութիւն պիտի առնենք և տօնենք իր սէրը:

Երբ Ծնունդին իմաստին մասին կը մտածէի, շատ յստակ եղաւ Յովհաննու 3:16ը ինծի - խորունկ նշմարտութիւն մը մեզի՝ թէ Աստուած իւրաքանչիւրս կը սիրէ - ահա՛ ձեզի Աստուծոյ խօսքին կեդրոնական նիւթը - կորիզը:

Երբ կեանքիս մասին մտածեմ, կը տեսնեմ իմ սիրելի ընտանիքս, հաւատարիմ բարեկամներս... կ'անդրադառնամ թէ որքան օրհնուած եմ - ունիմ տուն, ուտելիք, ուսում, առիթ Տիրոջ ծառայելու...: Հակառակ մեղաւոր ըլլալուս, Աստուծոյ շնորհալի փրկութիւնը նաշակած եմ, պարզապէս քանի որ Աստուած զիս սիրած է:

Ինչո՞ւ միատեղ գալով զինք պաշտենք: Ինչո՞ւ Ծնունդի տօնակատարութիւնը կարելոր կը նկատենք: Ինչո՞ւ եռանդով կ'ողջունենք տարուան այս պահը:

Ի՞նչ է Աստծոյ սիրոյն արժէքը: Ես չեմ հասկնար անոր լման խորութիւնը: Մարդկային միտքը չկրնար ըմբռնել զայն լիովին: Բայց Տէր Յիսուսը նանչնալ կը նշանակէ նաշակել Անոր սէրը, որ կը գերազանցէ ամէն կացութիւն, յոգնածին ոյժ կուտայ, վհատին յոյս կուտայ, վերջապէս՝ սէր մը որ յաւիտենական կեանք կը խոստանայ մեզի՝ Աստծոյ հետ:

Եկէ՛ք այս գիշեր, այս Ծնունդին առթիւ, Աստծոյ խորունկ սէրը յիշենք: Անդրադարձանք որ Աստծոյ պատուական սէրը փոխած է մեր կեանքերը: Այ՛ո, Աստուած քեզ և զիս կը սիրէ՛: